

կովուն քամակին վրայ՝ անթիւ մագեր բռնելու համար, որոնց իւրաքանչիւրին չափ տարի պիտի ապրէր. բայց, ափսոս, մէկ մագ իսկ չի յաջողիր բռնել եւ ձեռքերը օդին մէջ առկա՛խ կը մնան... եւ ահա այդ վայրկեանէն սկսեալ մահկանացու ենք, բարեկամներ:

Պատկերներու մէջ այնքան պատկերալից է Զարդարեան, որքան ներշնչուած նկարիչ բնութեան տեսարաններուն առջեւ: Հոս, աւելի քան իրապաշտ է: Առնենք, օրինակ, իր *Փողոցը*: Որքա՛ն չքաւոր նիւթ, ըստ երեւոյթին: Դիւրին չէ փողոց մը նկարագրել, մանաւանդ գաւառային քաղաքի մը փողոցը, անշարժ, անկենդան ու լճացած: Հոս է որ երեւան կուգայ գրողին տեսնելու, դիտելու, որոշելու կարողութիւնը: Զարդարեան շուն նկարագրելու մասնաւոր ընդունակութիւն մը ունի արդէն. տեսէք իր միւս մեծ, հերոսական, աշտարակաբերձ խրոխտութեամբ սոնքացող շունը, *Գամբռը*. քիչ անգամ ինծի տրուած է կարդալ գրուածք մը, որուն լեզուն այնքան պատշաճ բարձրութեան մը վրայ գտնուի, որքան նիւթը կը պահանջէ: Լեռնաբնակ ամեհի գամբռը, դիւցազնական կեանքի մը բոլորումէն յետոյ, ծերացած, լեռնէն կ'իջնայ քաղաք, կեանքին մնացեալ մասն անցընելու. եւ ահա քաղաքին անօթի շուներուն, զրկուած քոթոթներուն եւ դեռ կոյր լակոտներուն երամակը ոտքի կ'ելլայ, կը հաջէ, կը կաղկանծէ, կը փրփրի ինկած հսկային շուրջը որ հպարտօրէն եւ անտարբեր կ'անցնի այդ գարշելի ու լպիրշ վայնասունին մէջէն: Այդ հոյակապ գամբռը չա՞նձնաւորեր մարդկային վեհանձն ու վեհոգի անցեալ միութիւնը, որուն շուրջը ամբոխը կը տարածէ իր գծծութիւնները, իր ստորին նախանձները, իր ատելավառ վրէժխնդրութիւնները, երբ տեսնայ այդ մեծութիւնը իր քովը, իր հարուածներուն ենթակայ, գուցէ իր շահերուն ակնկառոյց: *Գամբռը՝ Յայգալոյսի*ն ամէնէն գեղեցիկ էջերէն մեկն է:

Զարդարեանի լեզուն, բոլոր գաւառացի գրողներուն մէջ, ամէնէն մաքուրը, ամէնէն ճոխը եւ ամէնէն ներդաշնակն է: Այս մասին, Թլկատինցին վար կը մնայ իրմէ, իր